ԿԱՐԾԻՔ

Միշա Վարուժանի Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման գործընթացը շարանակաբար կատարելագործման անհրաժեշտություն ունի: Շատ մանկավարժներ և հոգեբաններ, կրթության փիլիսոփաներ վերապահումով են մոտենում ազատությունից զրկված անձնանց վերադաստիարակության հիմնախնդիրին: Ակնհայտ է, որ այս համատեքստում «դաստիարակություն», «վերադաստիարակություն» և «կրթություն» հասկացությունները կարող են փոխլրացնել մեկը մյուսին: Սակայն գաղտնիք չէ, որ պատիժ կրող անձանց վերադաստիարակության հիմնախնդիրը լինելով արդիական, մնում է դժվար լուծելի: Ոչ ոք չի կարող ժխտել, որ կրթությունը եղել և մնում է պատիժ կրող անձնանց ուղղման արդյունավետ միջոց: Ավելին այն կարող է կանխարգել կրկնահանցագործությունը: Սակայն քրեակատարողական հիմնարկների հումանացման միտումները երբեմն բացահայտվում են հռչակագրերի մակարդակում: Պետք է զգույշ մոտենալ վերադաստիարակության և վերասոցիալականացման գործընթացներին, քանի որ երկուսն էլ ենթադրում են կազմակերպված լինելու տարբեր մակարդակներ: Սոցիալականացումը, ինչպես և վերասոցիալականացումը ոչ կազմակերպված, տարերային բնույթ ունեն, և դրանց կազմակերպումը, կանոնակարգումը երբեմն հակառակ արդյունք է տալիս: Ատենախոսը, քաջատեղյակ լինելով հիմնախնդրին, խոսում է վերադաստիարակության և վերասոցիալականցման մեխանիզմների և պայմանների ապահովման մասին: Դա դրական մոտեցում է: Սակայն, համագործակցային մակարդակում այդպիսի մեխանիզմների և պայմանների ապահովումը երբեմն հնարավոր չի լինում: Ատենախոսը հիմնախնդրին մոտենում է ինչպես անձի, այնպես էլ հանրային ավտագնության ապահովման տեսանկյունից:

Միշա Թադևոսյանը հանգամանորեն ներկայացնում է հայաստանյան իրականության առաջնահերթությունները, թվարկում է ՔԿՀ-ներում պատիժ կրող

անձանց կրթության քաղաքականության սկզբունքները և ուղենիշները, ներմուծում է «վերականգնողական արդարադատություն» հասկացությունը, բացահայտում է վերասոցիալականացման ռազմավարության առանձնահատկությունները: Նրան հաջողվում է նաև ներկայացնել ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման և կառավարման սկզբունքները և պահանջները: Նրան հաջողվում է կոնկրետ օրինակներով ցույց տալ, որ դժվար է ապահովել միջգերատեսչական համագործակցությունը, որը կարևոր պայման է իրականավող աշխատանքի մարժավականացման համար: Ատենախոսին հաջողվում է բացահայտել և ներկայացնել հետազոտության հիմնախնդիրը, հիմնավորել արդիականությունը: Փաստն այն է, որ ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության մանկավարժական հայեցակերպն անհրաժեշտ մակարադակում ՀՀ -ում ուսումնասիրված չէ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Առաջին «Քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության իրավունքի իրացումը» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին գլխի «ՔԿՀ-ներում պատիժ կրող անձնանց կրթադաստիարակչական աշխատանքի կազմակերպման տարբեր մոտեցումները և տեսությունները: Նա սահմանում է «պենիտենցիար մանկավարժություն», «ուղղիչ աշխատանքային մանկավարժություն» հասկացությունները: Տարբեր հեղինակների մոտեցումների վերլուծությունը հնարավորություն է տալիս ատենախոսին լուսաբանել ՔԿՀ-ներում պատիժ կրող անձնանց կրթադաստիարակչական աշխատանքի կազմակերպման տարբեր հայեցակերպերը՝ հաղորդակցական,, մշակութային, կրոնական, գեղագիտական, հոգեբանական և այլն:

Դրական է այն, որ ատենախոսը համամետում է ռուսական և արևմտյան ավանդույթները և բացահայտում է քրեակատարողական պրոգրեսիվ անգլիական մոդելի դրական կողմերը: Կարելի է առանձնացնել հատկապես Ռ. Քոլեյի և Փ. Բարթոնի մոտեցումը, ըստ որի՝ ուղղիչ հիմնարկներում պետք է ուսուցանել այն ինչ պահանջարկ ունի աշխատաշուկայում:

Երկրորդ «ՔԿՀ-ներում պատիժ կրող անձնանց կրթությունը մարդու իրավունքների միջազգային ուղենիշներում» ենթալխում ատենախոսը վերլուծում

է «կրթության իրավունք» հասկացությունը, հաշվի առնելով միջազգային իրավական նորմերը, կոնվենցիաները, բանտային կանոնները, ուղենիշները:

Երրորդ՝ «ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման իրավական հիմքերը ՀՀ-ում» ենթագլխում ատենախոսը սահմանում է «կրթական քաղաքականություն», «կրթության բնագավառի քաղաքականություն» հասկացությունները, ներակայացնում է «Կրթության մասին», «Հանրակրթության մասին» օրենքները, ՀՀ-ում մեծահասկաների կրթության հայեցակարգը, ռազմավարությունը և այլ փաստաթղթեր:

Երկրորդ «Քերակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց կրթության կազմակերպման պրակտիկան» բաղկացած է երեք գլխից:

Երկրորդ գլխի առաջին «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպումը սկանդինավյան որոշ երկրներում «Դանիա, Նորվեգիա, Շվեդիա» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է ՔԿՀ-ներում կրթության կազմակեպման հիմնական մոդելները՝ արտահանման, ներմուծման, ինքնաբավության, պայմանագրային, խառը: Աշխատանքի նորույթներից և դրական կողմերից մեկը սկանդինավյան փորձի ուսումնասիրությունն է: Ատենախոսին հաջողվում է ցույց տալ դրա դրական, օրինակելի կողմերը:

Երկրորդ «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպումը հետխորհրդային որոշ երկրներում /Բելառուս, Մոլդովիա, Ուկրաինա/ ենթագլխում ատենախոսը ներկայացնում է բացահայտում է քրեակատարողական հիմնարկների հումանացման միտումները տվյալ երկրներում, խորհրդային շրջանում և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո:

Երրորդ «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման պրակտիկան ՀՀ-ում» ատենախոսը ներկայացնում է ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց ոչ ֆորմալ և ֆորմալ ծրագրերը, այդ ծրագրերը իրականացնող հասարակական կազմակերպությունները, ինքնագործ մաիավորումները, ֆորմալ կրթրական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները:

Երրորդ «ՀՀ քերակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման առաջարկվող համակարգը» գլուխը բաղկացած երեք ենթագխից: Առաջին «ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման առկա վիճակի ուսումնասիրություն ու գնահատում» ենթագլխում ատենախոսն ատնեախոսը հիմնավորում է առաջարկվող մոդելի արդյունավետությունը, իրականացնելով ՀՀ որոշ ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման ուսումնասիրություն և

գնահատում: Ատենախոսին հաջողվում է վիճակագրական-մաթեմատիկական մեթոդի կիրառմամբ ներկայացնել կրթության կազմակերպման վիճակը ՔԿՀ-ներում, հիմնավորել առաջարկվող մոդելի արդյունավետությունը:

Երրորդ «ՔԿՀ-ներում կրթության կառավարման և կազմակերպման մշակված համակարգը» ենթագլխում ատենախոսը վերլուծում է ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման փորձը: Ըստ այդ փորձի վերլուծության արդյունքների ատենախոսը անում է օգտակար առաջարկություններ: Միշա Թադևոսյան հանգամանորեն վերլուծում է ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման մանկավարժական պայմանները, ՔԿՀ-ներում դասավանդողների կոմպետենցիաները, համագործակցության ձևերը:

Աշխատանքի ուսումնասիրության արդյունքում կատարվել են որոշ դիտարկումներ.

1. Մակարենակոյի տեսության գնահատակականը հիշեցնում է խորհրդային մանկավարժության լավագույն ավանդույթները: Մակարենկոն եղել և մնում է տոտալիտար հասարակության դաստիարակության և վերադաստիարակության կողմնակից:

2. Կարելի է նշել, որ Ս. Վ. Պոզնիշևը գաղափարախոսական առումով ոչ մի ընդհանրություն չուներ Մակարենկոյի հետ, քանի որ նա ցարական Ռուսաստանի պրոֆեսոր էր:

3. Կարելի է հստակորեն նշել, թե հայ մանկավարժները, քրեակատարողական հիմնարներում աշխատող հոգեբանները և այլ մասնագետները ինչ կարծրատիպեր և դաստիարակության և վերադաստիարակության մեխանիզմներ պետք է հաղթահարեն թե՞ տեսական աշխատանքներում, թե՞ գործնականում:

4. Կարելի էր շեշտադրել, թե ինչ մեթոդաբանական մոտեցումներ են արտացոլում ՔԿՀ-ներում կրթության կազմակերպման հումանացման միտումներն արդի փուլում:

Հետազոտության եզրակացություններն արտացոլում են նրա առաջադիր խնդիրները, ամբողջական են, տրամաբանորեն փոխկապակցված: Մեծ տեսագործնական նշանակություն ունեն ոչ միայն եզրակացությունները, այլև առաջարկությունները: Հետազոտության ընթացքում օգտագործած գրականությունն արդիական է:

Այսպիսով, կարելի է եզրահանգել. որ գրախոսվող ատենախոսության հետազոտության թեման արդիական է, գիտական նորույթը, տեսական,

գործնական նշանակությունը կասկած չեն հարուցում: Ստացված արդյունքները հավաստի են: Հոդվածները և սեղմագիրն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Միշա Վարուժանի Թադևոսյանի «Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» թեմայով թեկնածուական ատենախոսությունն ամբողջական, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի (ԺԳ.00.02, թվանիշով) գիտական աստիճանին ներկայացվող պահանջները, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Ի.Կ.Կարապետյան

Ի.Կ.Կարապետյանի ստորագրությունը
հաստատում եմ՝ ՀՊՄՀ-ի գիտ.քարտուղար՝ Մ. Իսպիրյան
20.10.2021թ.